



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

17 ՀՈՒՆԻՍԻ 2022թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Հակոբյանը, Աղվան Հարությունյանը, Վարդան Սամսոնյանը

#### Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Պապին Վարդանյան, Մարոզ Սարիբեկյան, Միհրան Մելքումյան, Լուսինե Չոբանյան, Հասմիկ Մելքումյան

#### Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

#### Նիստը արձանագրում էր բաժնի պետ՝ Հասմիկ Մելքումյանը

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 17-ի թիվ 9 հերթական նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 71-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կազմում ավագանու անդամների ընդգրկման մասին
3. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին
4. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը և համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարելու և օգտագործման տրամադրելու մասին
5. Ներքնակավյրային աշխարհագրական օբյեկտների անվանման մասին